Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-652-21.08.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասում «Կառավարությունը» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ և 12.1-ին մասերի)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 8-րդ և 9-րդ մասերում «մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ և 12.1-ին մասերի)» բառերը.

2) 12-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին մաս.

«12.1. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, մրցույթի անցկացման կարգը և սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված պայմանները (պահանջները) սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»

3) 13-րդ մասում «մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «երեք ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «երեք ամսվա ընթացքում» բառերով.

2) 7-րդ մասում «երեք տարբերակները,» բառերից հետո լրացնել «բանավոր ստուգման տոմսերը,» բառերը, իսկ «թեստավորման անցկացման պայմանները» բառերը փոխարինել «թեստավորման և բանավոր ստուգման անցկացման պայմանները» բառերով.

3) 8-րդ մասում «թեստավորման Հարցարանի» բառերից հետո լրացնել «և բանավոր ստուգման» բառերը.

4) 10-րդ մասի 2-րդ կետի «որի ընթացքում» բառերից հետո լրացնել «թեստերի և բանավոր ստուգմանմիջոցով» բառերը, իսկ «Թեստավորման անցկացման նույն օրը» բառերը փոխարինել «Թեստավորման ավարտման օրը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 45-րդ հոդվածի

1. 1-ին և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.
2. 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի տեսակների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, ձեռքբ բերելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը հաստատում է Կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1 գլխով.

«**ԳԼՈՒԽ 7.1**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ (ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ): ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 45.1. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին թույլատրվում է կրել և պահել զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժ, այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ, ինչպես նաև զենք ու հատուկ միջոցներ կիրառել, եթե այլ միջոցներով հնարավոր չէ ապահովել օրենքով սահմանված պարտականությունների կատարումը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստականություն, որի շրջանակում սովորում են բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Համապատասխան պատրաստականություն անցնելուց հետո հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի պահելու և կրելու զենք ու հատուկ միջոցներ:

3. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելու նպատակահարմարությունը դիտարկելիս, ինչպես նաև տեսակի ընտրությունը կատարելիս հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պարտավոր է գործել ստեղծված իրավիճակին, դիմադրության կամ իրավախախտման վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ՝ հաշվի առնելով իրավախախտի անձը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք կիրառելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և ենթադրյալ հանցագործությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց կիրառման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պարտավոր է նաև՝

1) ձգտել, որ ենթադրյալ հանցանք կատարած անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

2) ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնություն, մահվան դեպքերում՝ պարտադիր, իսկ մարմնական

վնասվածքների դեպքում՝ ըստ անհրաժեշտության անհապաղ հրավիրել շտապ բժշկական օգնության բրիգադ.

3) ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ (բացառությամբ ձեռնաշղթաների) և զենք կիրառելու յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:

6. Օրենքով չնախատեսված դեպքերում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը կամ սահմանազանցումով դրանց կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է վերադասության կարգով մինչև հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին, իսկ վերջինս էլ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է գլխավոր դատախազին:

8. Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 7-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկացումը կատարվում է գրավոր՝ նշելով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի կիրառման անհրաժեշտությունը փաստող հանգամանքները և իրավական հիմքերը, այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կիրառվել են դրանք, կիրառված հատուկ միջոցների, զենքի և ռազմամթերքի տեսակը և քանակը, մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնությանն ուղղված միջոցառումները, մարմնական վնասվածքներ ստացած անձանց կամ մահացածներին տեղափոխելու վայրերը:

Հոդված 45.2. Ֆիզիկական ուժի գործադրումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ),

ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա դրված պարտականությունների կատարումը:

Հոդված 45.3. Հատուկ միջոցների գործադրումը

1. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված և սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական կամ հոգեբանական կամ նյութական օբյեկտների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման կամ այլ գործառույթներն իրականացնելիս իրավունք ունեն հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցներ գործադրել՝

1) քաղաքացիների և հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելիս.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կամ կոռուպցիոն հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում.

3) ենթադրյալ հանցանքի կատարման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

4) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

5) կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք կատարած անձանց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով հակակոռուպցիոն կոմիտե բերելիս կամ ձերբակալելիս, ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելիս կամ նրանց պահելիս, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին, դիմադրություն ցույց տալ

հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կամ չենթարկվել նրա օրինական պահանջներին.

6) առևանգված, ապօրինաբար ազատությունից զրկված և բռնի կերպով պահվող անձանց ու զավթված բնակարանները, շինությունները, տարածքներն ու տրանսպորտային միջոցներն ազատելիս.

7) ավտոտրանսպորտային միջոցը կանգնեցնելիս, երբ վարորդն ակնհայտորեն չի ենթարկվում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պահանջին.

8) ենթադրյալ հանցանք կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են գործադրել՝

1) ռետինե մահակներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) արցունքաբեր, գրգռիչ գազ, ծխաքողարկող միջոցներ, ռետինե գնդակներով փամփուշտներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) ձեռնաշղթաներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) արգելքներ քանդելու միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

6) մարդկանց և տրանսպորտային միջոցների հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 7-րդ կետերով նախատեսված դեպքերում.

7) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

8) հատուկ ներկող նյութեր՝ սույն հոդվածի առաջին մասի 8-րդ կետով նախատեսված դեպքերում.

9) ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում:

3. Հատուկ միջոցների բոլոր տեսակները կարող են գործադրվել նաև սույն օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում:

4. Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձի և անչափահասների (այդ թվում, եթե ծառայողին հայտնի է անձի հղի, հաշմանդամություն ունենալու կամ անչափահաս լինելու հանգամանքը) նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաև մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցի չկիրառումը կարող է հանգեցնել մարդկային զոհերի:

5. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների կամ զենքի բացակայության դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի օգտագործել իրեն հասանելի բոլոր հնարավոր միջոցները:

6. Արգելվում է հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք, ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի, կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը՝ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերի հիման վրա:

7. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեին հատկացնելու, ինչպես նաև հատուկ միջոցները պահպանելու և դրանց պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգերը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 45.4. Զենքի կիրառումը (գործադրումը և օգտագործումը)

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման կամ այլ գործառույթներն իրականացնելիս իրավունք ունեն զենք գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին ազատելիս.

4) ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված կամ խմբակային դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

5) ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն իրավունք ունեն զենք օգտագործել՝

1) տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդն իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի ու առողջության համար և չի ենթարկվում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

2) մարդկանց կյանքին և առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

3) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձի և անչափահասների (այդ թվում, եթե ծառայողին հայտնի է անձի հղի, հաշմանդամություն ունենալու կամ անչափահաս

լինելու հանգամանքը) նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև երբ զենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

4. Արգելվում է հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ զենքի կամ ռազմամթերքի այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք պատճառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվածից առավել ծանր վնասվածքներ կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պահելու և կրելու իրավունքով զենք և ռազմամթերք հատկացնելու, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից զենքը հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Իսկ հատկացված զենքը պահելու և կրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 45.5. Հակակոռուպցիոն կոմիտեի զինված ծառայողի անձնական անվտանգության երաշխիքները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի զինված ծառայողն իրավունք ունի մերկացնել և մարտական վիճակի բերել զենքը, եթե գտնում է, որ ստեղծված իրադրությունում կարող է սույն օրենքի 45.4-րդ հոդվածին համապատասխան զենքի կիրառման անհրաժեշտություն առաջանալ:

2. Մերկացրած զենքով ձերբակալում կատարող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձերբակալվողի ցանկացած փորձ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին իրավունք է տալիս առանց նախազգուշացման զենք գործադրել սույն օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 45.6. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության հատուկ միջոցները

1. Անձնական անվտանգության ապահովման համար հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի օգտագործել սաղավարտ, վահան, զրահաբաճկոն, հակագազ և անձնական պաշտպանության հատուկ այլ միջոցներ:

2. Անձնական պաշտպանության հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասում «Կառավարությունը» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ և 12.1-ին~~րդ~~ մասերի)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 8-րդ և 9-րդ մասերում «մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ և 12.1-ին~~րդ~~ մասերի)» բառերը.

2) 12-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին~~րդ~~ մաս.

«12.1. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, մրցույթի անցկացման կարգը և

սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված պայմանները (պահանջները) սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»

3) 13-րդ մասում «մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «երեք ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի՝

5) 5-րդ մասում «մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «երեք ամսվա ընթացքում» բառերով.

6) 7-րդ մասում «երեք տարբերակները,» բառերից հետո լրացնել «բանավոր ստուգմանհարցազրույցի քննական տոմսերը,» բառերը, իսկ «թեստավորման անցկացման պայմանները» բառերը փոխարինել «թեստավորման և բանավոր ստուգմանհարցազրույցի անցկացման պայմանները» բառերով.

7) 8-րդ մասում «թեստավորման Հարցարանի» բառերից հետո լրացնել «և բանավոր ստուգմանհարցազրույցի» բառերը.

8) 10-րդ մասի 2-րդ կետի «որի ընթացքում» բառերից հետո լրացնել «թեստերի և բանավոր ստուգմանհարցազրույցի միջոցով» բառերը, իսկ «Թեստավորման անցկացման նույն օրը» բառերը փոխարինել «Թեստավորման ավարտման օրը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 45-րդ հոդվածի

3. 1-ին և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

3.4. 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի և անձնական պաշտպանության միջոցների տեսակների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, ձեռք բերելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը հաստատում է Կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 7.1

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ (ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ): ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 45.1. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները

9. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին թույլատրվում է կրել և պահել ~~հաշվեցուցակային~~ զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժ, այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ, ինչպես նաև զենք ու հատուկ միջոցներ կիրառել, եթե այլ միջոցներով հնարավոր չէ ապահովել օրենքով սահմանված պարտականությունների կատարումը:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստականություն, որի շրջանակում սովորում են բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Համապատասխան պատրաստականություն անցնելուց հետո հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի պահելու և կրելու զենք ու հատուկ միջոցներ:

11. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելու նպատակահարմարությունը դիտարկելիս, ինչպես նաև տեսակի ընտրությունը կատարելիս հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պարտավոր է գործել ստեղծված իրավիճակին, դիմադրության կամ իրավախախտման վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ՝ հաշվի առնելով իրավախախտի անձը:

12. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք կիրառելու մասին՝

բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և ենթադրյալ հանցագործությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց կիրառման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

13. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պարտավոր է նաև՝

1) ձգտել, որ ենթադրյալ հանցանք կատարած անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

2) ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնություն, մահվան դեպքերում՝ պարտադիր, իսկ մարմնական վնասվածքների դեպքում՝ ըստ անհրաժեշտության անհապաղ հրավիրել շտապ բժշկական օգնության բրիգադ.

3) ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ (բացառությամբ ձեռնաշղթաների) և զենք կիրառելու յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:

14. Օրենքով չնախատեսված դեպքերում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը կամ սահմանազանցումով դրանց կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

15. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է վերադասության կարգով մինչև հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին, իսկ վերջինս էլ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է << գլխավոր դատախազին:

16. Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 7-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկացումը կատարվում է գրավոր՝ նշելով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի կիրառման անհրաժեշտությունը փաստող հանգամանքները և իրավական հիմքերը, այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կիրառվել են

դրանք, կիրառված հատուկ միջոցների, զենքի և ռազմամթերքի տեսակը և քանակը, մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին օգնությանն ուղղված միջոցառումները, մարմնական վնասվածքներ ստացած անձանց կամ մահացածներին տեղափոխելու վայրերը:

Հոդված 45.2. Ֆիզիկական ուժի գործադրումը

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի ~~դիմադրություն ցուցաբերած անձի կամ անձանց նկատմամբ~~ գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա դրված պարտականությունների կատարումը:

Հոդված 45.3. Հատուկ միջոցների գործադրումը

8. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված և սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական կամ հոգեբանական կամ նյութական օբյեկտների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման կամ այլ գործառույթներն իրականացնելիս իրավունք ունեն հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցներ գործադրել՝

1) քաղաքացիների և հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելիս.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կամ կոռուպցիոն հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում.

3) ենթադրյալ հանցանքի կատարման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

4) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

5) կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք կատարած անձանց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով հակակոռուպցիոն կոմիտե բերելիս կամ ձերբակալելիս, ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելիս կամ նրանց պահելիս, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին, դիմադրություն ցույց տալ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կամ չենթարկվել նրա օրինական պահանջներին.

6) առևանգված, ապօրինաբար ազատությունից զրկված և բռնի կերպով պահվող անձանց ու զավթված բնակարանները, շինությունները, տարածքներն ու տրանսպորտային միջոցներն ազատելիս.

7) ավտոտրանսպորտային միջոցը կանգնեցնելիս, երբ վարորդն ակնհայտորեն չի ենթարկվում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պահանջին.

8) ենթադրյալ հանցանք կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս:

9. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են գործադրել՝

1) ռետինե մահակներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) արցունքաբեր, գրգռիչ գազ, ծխաքողարկող միջոցներ, ռետինե գնդակներով փամփուշտներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) ձեռնաշղթաներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) արգելքներ քանդելու միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

6) մարդկանց և տրանսպորտային միջոցների հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 7-րդ կետերով նախատեսված դեպքերում.

7) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

8) հատուկ ներկող նյութեր՝ սույն հոդվածի առաջին մասի 8-րդ կետով նախատեսված դեպքերում.

9) ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում:

10. Հատուկ միջոցների բոլոր տեսակները կարող են գործադրվել նաև սույն օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում:

11. Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձի և անչափահասների (այդ թվում, եթե ծառայողին հայտնի է անձի հղի, հաշմանդամություն ունենալու կամ անչափահաս լինելու հանգամանքը) նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաև մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցի չկիրառումը կարող է հանգեցնել մարդկային զոհերի:

12. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների կամ զենքի բացակայության դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի օգտագործել իրեն հասանելի բոլոր հնարավոր միջոցները:

13. Արգելվում է հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք, ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի, կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը՝ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերի հիման վրա:

14. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեին հատկացնելու, ինչպես նաև հատուկ միջոցները պահպանելու և դրանց պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգերը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 45.4. Զենքի կիրառումը (գործադրումը և օգտագործումը)

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման կամ այլ գործառույթներն իրականացնելիս իրավունք ունեն զենք գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին ազատելիս.

4) ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված կամ խմբակային դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

5) ~~կոռուպցիոն բնույթի~~ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն իրավունք ունեն զենք օգտագործել՝

1) տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդն իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի ու առողջության համար և չի ենթարկվում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

2) մարդկանց կյանքին և առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

3) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձի և անչափահասների (այդ թվում, եթե ծառայողին հայտնի է անձի հղի, հաշմանդամություն ունենալու կամ անչափահաս լինելու հանգամանքը) նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև երբ զենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

4. ~~Հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի տեսակների ցանկը հաստատում է Կառավարությունը:~~ Արգելվում է հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ զենքի կամ ռազմամթերքի այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք պատճառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվածից առավել ծանր վնասվածքներ կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր:

5~~6~~. ~~Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պահելու և կրելու իրավունքով հաշվեցուցակային զենք և ռազմամթերք հատկացնելու, ինչպես նաև հատկացված զենքը պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է Կառավարությունը:~~Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պահելու և կրելու

իրավունքով զենք և ռազմամթերք հատկացնելու, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից զենքը հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Իսկ հատկացված զենքը պահելու և կրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 45.5. Հակակոռուպցիոն կոմիտեի զինված ծառայողի անձնական անվտանգության երաշխիքները

2. Հակակոռուպցիոն կոմիտեի զինված ծառայողն իրավունք ունի մերկացնել և մարտական վիճակի բերել զենքը, եթե գտնում է, որ ստեղծված իրադրությունում կարող է սույն օրենքի 45.4-րդ հոդվածին համապատասխան զենքի կիրառման անհրաժեշտություն առաջանալ:

4. Մերկացրած զենքով ձերբակալում կատարող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձերբակալվողի ցանկացած փորձ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին իրավունք է տալիս առանց նախազգուշացման զենք գործադրել ~~օգտագործել~~ սույն օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 45.6. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության հատուկ միջոցները

3. Անձնական անվտանգության ապահովման համար հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի օգտագործել սաղավարտ, վահան, զրահաբաճկոն, հակագազ և անձնական պաշտպանության հատուկ այլ միջոցներ:

~~4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը հաստատում է Կառավարությունը:~~

~~5.~~4.Անձնական պաշտպանության հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»:

Հոդված 6. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-652-21.08.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին, 2-րդ հոդվածներ	Հղումների հստակության ապահովման նպատակով առաջարկում ենք նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն օրենքի» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված կանոնը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.		ամբողջ նախագիծ	Նախագծի ամբողջ տեքստում առաջարկում ենք պահպանել դասական թվականների ճիշտ գրության ձեւը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.		Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են «հարցազրույց» եւ «բանավոր հարցազրույց» եզրույթները: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասն՝ առաջարկում ենք Նախագծում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ Նախագծի 3-րդ հոդվածի՝ 1. 2-րդ կետում «հարցազրույցի քննական» բառերն առաջարկում ենք փոխարինել «բանավոր ստուգման» բառերով, իսկ «թեստավորման և հարցազրույցի» բառերից փոխարինել «թեստավորման և բանավոր ստուգման» բառերը, 2. 3-րդ կետում «հարցազրույցի» բառը փոխարինել «բանավոր ստուգման» բառերով, 3. 4-րդ կետում «հարցազրույցի» բառը փոխարինել «ստուգման» բառով: Նշենք նաեւ, որ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթի անցկացման փուլերից է «հարցազրույցի փուլը»: Հետեւաբար թեստավորման փուլում հարցազրույցի ընդգրկումը միեւնույն եզրույթի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կիրառության տեսանկյունից կարող է հանգեցնել իրավական անորոշության: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով Թեստավորման որպես առանձին տեսակ է նախատեսվել բանավոր ստուգումը, որի նպատակն է ստուգել բացառապես թեկնածուի մասնագիտական գիտելիքները:		
4.		Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 45-րդ հոդվածում լրացվող նոր 4-րդ մասի համաձայն. «4. Հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, զենքի եւ անձնական պաշտպանության միջոցների տեսակների ցանկը, ինչպես նաեւ դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու եւ ոչնչացնելու կարգը հաստատում է Կառավարությունը:»: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված իրավակարգավորումը եւս լիազորում է Կառավարությանը հաստատել հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված զենքի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			տեսակների ցանկը: Բացի այդ, Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավակարգավորումը լիազորում է Կառավարությանը հաստատել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության միջոցների ցանկը, ինչպես նաեւ դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու եւ ոչնչացնելու կարգը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասն՝ առաջարկում ենք Նախագծում բացառել անհիմն կրկնությունները: Բացի այդ, 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի դրույթների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն համարվում է պետական ռազմականացված կազմակերպություն և իրավունք ունի ձեռք բերել զենք (2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 14-րդ հոդված): Իսկ նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ պետական ռազմականացված		

			կազմակերպությունների՝ զենք ձեռք բերելու կարգը սահմանում է Կառավարությունը: Հարկ է նշել, որ Նախագծով անդրադարձ չկա հատուկ միջոցների և անձնական պաշտպանության հատուկ միջոցների ձեռքբերման կարգին: Ուստի, առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածում սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի տեսակների ցանկը սահմանելու, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգի հետ մեկտեղ նախատեսել նաև դրանց ձեռքբերման կարգին վերաբերելի դրույթներ: Այսպիսով՝ առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացվող նոր 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «4. Հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների, անձնական պաշտպանության հատուկ միջոցների, զենքի, զենքի լրակազմի, օժանդակ միջոցների և ռազմամթերքի		

			տեսակների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, ձեռք բերելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը հաստատում է Կառավարությունը:»: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք նաև Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունը հանել, ինչպես նաև 45.6-րդ հոդվածի 2-րդ կետը:		
5.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածին	2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի դրույթների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն համարվում է պետական ռազմականացված կազմակերպություն և իրավունք ունի ձեռք բերել զենք: Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները եւ ներքին հակասությունները»: Վերոգրյալները հաշվի առնելով և նպատակ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ունենալով բացառել Նախագծի տարբեր հոդվածներում անհիմն կրկնությունները (Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.1-ին հոդվածի 1-ին մաս, 45.4-րդ հոդվածի 5-րդ մաս), առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածում կատարել փոփոխություն և ուժը կորցրած ճանաչել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում չի գործածվում «հաշվեցուցակային զենք» հասկացությունը, ուստի առաջարկում ենք Նախագծում գործածվող «հաշվեցուցակային» բառը հանել: Դրանից բացի, Կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի թիվ N 889-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ «կազմակերպությունների ստորաբաժանումներում գտնվող զենքի հաշվառումը, աշխատակիցներին զենք տալու, աշխատակիցների կողմից զենքը հանձնելու		

			հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կազմակերպությունների ղեկավարների հրամանով:»: Հաշվի առնելով կառավարության որոշմամբ սահմանված վերոհիշյալ դրույթն՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածի 5-րդ մասը վերախմբագրել և համապատասխանեցնել գործող կարգավորումներին: Բացի այդ, Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածում 4-րդ մասին հաջորդում է 6-րդ մաս: Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի ՝ 1. 4-րդ հոդվածը լրացնել նոր 1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «1. 1-ին և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.», 2. 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.1-ին հոդվածից հանել «հաշվեցուցակային» բառը, 3. 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածի 6-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝		

			«5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պահելու և կրելու իրավունքով զենք և ռազմամթերք հատկացնելու, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից զենքը հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Իսկ հատկացված զենքը պահելու և կրելու կարգը սահմանում է Կառավարությունը:» 4. վերանայել Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածում 4-րդ մասի համարակալումը:		
6.		Նախագծի 5-րդ հոդված /Գլուխ 7.1 վերնագիր/	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլուխը վերնագրված է հետևյալ վերտառությամբ. «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ (ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ): ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում նախատեսված են նաեւ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հակակոռուպցիոն կոմիտեի զինված ծառայողի անձնական անվտանգության երաշխիքների վերաբերյալ իրավակարգավորումներ: Այսպես՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված է իրավակարգավորումների ավելի լայն շրջանակ, քան բխում է Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխի վերնագրի բովանդակությունից: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված է. «Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը:»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը: Ըստ այդմ՝ առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 7.1-ին գլխի վերնագրում «ՄԻՋՈՑՆԵՐԸ» բառից հետո լրացնել «ԵՎ ԶԻՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ		

			ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ» բառերը:		
7.		Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.1-ին հոդվածի 7-րդ մասում «ՀՀ» հապավումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանդրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթը: Սույն առաջարկը բխում է նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.		Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը ֆիզիկական ուժի գործադրման համար նախատեսվել է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ կարող է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից գործադրվել ֆիզիկական ուժ, այն է. «դիմադրություն ցուցաբերած անձի կամ անձանց նկատմամբ»՝ հիմք ընդունելով ֆիզիկական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ուժի գործադրման միայն դիմադրություն ցույց տալու դեպքերը: Մինչդեռ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու դեպքերում, ինչպես նաեւ ինքնապաշտպանության նպատակով ֆիզիկական ուժի գործադրման համար անձանց շրջանակ նախատեսված չէ: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.2-րդ հոդվածի 1-ին մասում չսահմանել այն անձանց շրջանակը, ում նկատմամբ կարող է գործադրվել ֆիզիկական ուժ: Ըստ այդմ նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.2-րդ հոդվածի 1-ին մասից առաջարկում ենք հանել «դիմադրություն ցուցաբերած անձի կամ անձանց նկատմամբ» բառերը:		
9.		Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում սահմանված են հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի կիրառման (գործադրման եւ օգտագործման), ինչպես նաեւ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության միջոցների վերաբերյալ իրավակարգավորումներ: Հիմք ընդունելով Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.3-րդ հոդվածի եւ 45.6-րդ հոդվածի իրավակարգավորումները՝ կարող ենք նշել, որ «հատուկ միջոցներ» եւ «անձնական պաշտպանության միջոցներ» հասկացությունները հստակ տարբերակված են Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում: Մինչդեռ Օրենքի 45-րդ հոդվածը վերնագրված է «Հակակոռուպցիոն ծառայողի անվտանգությունը եւ անձնական պաշտպանության միջոցները» եւ դրանում ներառված իրավադրույթները վերաբերում են անձնական պաշտպանության **հատուկ** միջոցներին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում «հատուկ միջոցներ» եւ «անձնական պաշտպանության միջոցներ» հասկացությունների հստակ տարբերակման պարագայում առաջարկում ենք վերանայել Օրենքի 45-րդ հոդվածում կիրառված		

			«անձնական պաշտպանության միջոցներ» եւ «անձնական պաշտպանության հատուկ միջոցներ» եզրույթները: Ըստ ադմ նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխի վերնագրում, 45.6-րդ հոդվածում «անձնական պաշտպանության» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «հատուկ» բառը:		
10.		Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածին	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ «Արգելվում է հակակոռուպցիոն կոմիտեի սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք, ըստ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի, կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը՝ հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերի հիման վրա:»: Նախագծով առաջարկվում է, որ մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների չափանիշները սահմանվի Առողջապահության նախարարի կողմից՝ հիմք ընդունելով հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերը, սակայն չի հստակեցվում, թե հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերը ում կողմից պետք է ներկայացվեն: Ուստի, առաջարկում ենք՝ որոշակիացնել և հստակ նշել, թե ում կողմից պետք է ներկայացվի:		

			Ըստ այդմ նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.3-րդ հոդվածում «նախարարը՝» բառից հետո լրացնել «հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած» բառերը:		
12.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածին	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից զենք գործադրելու հնարավոր եղանակները, որոնցում առանձնացված է կոռուպցիոն բնույթի ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս զենք գործադրելու հնարավորությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 17-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ «նախաքննության տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ վարույթի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ընթացքում այլ քննիչի ենթակա և սույն մասի 11-րդ կետով չնախատեսված հանցանքի բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է վերադաս դատախազը՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով, բացառությամբ սույն մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքների, ինչպես նաև սույն մասի 7-9-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների.»: Իսկ 2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու 181-րդ հոդված, որի 6-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթները միացվել են մեկ վարույթում, նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»: Վերոհիշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ոչ միայն կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ վարույթներն է քննում, այլ նաև դրանց միացած ոչ կոռուպցիոն բնույթի		

			հանցագործությունները: Ուստի, առաջարկում ենք՝ 45.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում գործածվող «կոռուպցիոն բնույթի» բառերը հանել:		
13.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածին	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.5-րդ հոդվածի 2-րդ մասում հղում է կատարվում օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 45.5-րդ հոդվածի 2-րդ մասում գործածվում է «զենք օգտագործել» բառերն այն դեպքում, երբ օրենքի 45.4-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետը վերաբերում է զենք գործադրելուն: Բանն այն է, որ Նախագծով տարբերակված է «զենք օգտագործել» և «զենք գործադրել» բառերը, ուստի առաջարկում ենք Նախագծում կատարել համապատասխան շտկում: Ըստ այդմ նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 7.1-ին գլխում ներառված 45.5-րդ հոդվածի 2-րդ մասում «օգտագործել» բառն առաջարկում ենք փոխարինել «գործադրել» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: